

միշտ միատեսակ զօրութեան և թուլութեան մտ-
կրնթացութիւն և տեղատուութիւն ունին: Նեար-
դերով յազնաճները կարող են արտայայտել ընդ-
նուած հոգւոյ ամէն աստիճանաւորութիւններ՝
անհանգստութիւն, անվճռականութիւն, փոքր-
գութիւն, ծուլութիւն, ահ, անձկութիւն: Առ-
հասարակ նորա կարեկից են ուրիշի չարչարանք-
ներին, որովհետեւ միշտ ձգտում են այլոց ուշա-
դրութիւնն ու գութը դարձնել իրանց ասնջանք-
ների վերայ: Կատկած, ծուլութիւն, երկիւղ, վիշտ
— այս ամէնը ուղեղի սպառման աստիճաններ
են. գոռոզութիւն, յանգստութիւն, բարկութիւն,
անձնասիրութիւն, քաջութիւն, հերոսութիւն,
անգթութիւն — ուղեղի զրգուման աստիճաններ
են: Աւելի է այս: Անշուշտ, փորձի համար վեն
առէք անհասարակչաւանների այս կամ այ-
լամբին պատկանող մէկին: այսինքն կամ ընդհու-
ածին (թուլանեարդին) և կամ վիզը բարձր բռնու-
ղին (ժայռազրգիւ մէկին): Առաջին դարմաներ
ցէր լատ զօրացուցիչ դեղով, երկրորդին՝ հանգըս-
տացուցիչ ճարով: Գութ խեղճ կը նկատէք այդ
երկուսի արամազրութեանց կատարեալ փոխու-
թութիւն, դոցա հոգւոյ այլակերպութիւն. գոքա
ուրիշ մարդ կը դառնան — բառիս բուն նշանա-
կութեամբ:

Արեւմտեան ըստիւսկան կրթութեան խոհական
խնդիրն այն է, որ հասարակչաւանին մարդկանց
բարբի ծայրայեղութիւնները, որ «քաջալերուն»
զանգաղները և «ստաշին» խիտ տար գլուխներ-
ը: Այդպիսիների երկու խումբն էլ ներդաշնակու-
թեան ասնջանից դուրս են կեցած և խան-
դարում են հոգւոյ հաւասարակչութիւնը: Թոյ-
լերը միշտ ասնջում են վշտից, խի խիղախ-
ները, յարաշարժները, իրանց զօրութեանց առա-
տութիւնը շաւղորդները՝ շուրջ չորս կողմը սեր-
մանում են դժգոհութիւն, թշուառութիւն և
շիթթութիւն: Մարդու զարկերակը համարելով
արգէն խմանում ենը նորա հոգւոյ արամազրու-
թիւնը, աւելի ճիշտ տեղեկութիւն ենը ստանում
արեան ճնշումը չափելով, Այս ճնշումը փոխ-
վում է հոգւոյ արամազրութեան հետ ի միասին:
Թուլանեարդների արեան ճնշումը հասնում է ամե-
նայաջող դէպքերում (չաւ արամազրութեան ժամա-
նակ) 12 հարիւրերորդամեարին, ապա 13-ից մինչև
16-ի ճնշումը առհասարակ համապատասխանում
է հոգւոյ չէզոք հասարակչաւանին. այս թուից
ի վեր ճնշումը առաջ է բերում հոգեկան կորակի
յորդառատութիւն, խի ի վայր ճնշումը՝ կորակի
նուազումը: Առ այժմ Գլեբիլի տախտակից այս-
բան միայն պէտք է եղանակցենէլ, բայց այսբանն
էլ խրատական է:

Ս. Ս.

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼՆԵՐԸ

Մ. ԽՈՐԵՆԱՅՈՒ

ՀԱՅՈՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԻՋ.

(ԲՆԵԱԳԱՏՈՒԹԻՒՆ և ՈՒՍՈՒԱՅԲ)

ՆԵՐԱՇՈՒԹԻՒՆ.

Հայոց հին «վէպերի» կամ «վէպի» մասին
1850 թուականից ի վեր ուսումնասիրութիւն-
ներ են լինում. բայց խնդիրը դեռ ևս պար-
զուած չէ, այլ մանաւանդ թէ պարզուելու
փոխանակ աւելի մթնացիկ է շնորհիւ երկու
ճայրայեղ ենթադրութեանց:

Հանգուցեալ Էմինը՝ աւելի ցանկութեան
քան թէ իրականութեան վրայ հիմնուելով,
Խորենացու Հայոց Պատմութեան Առաջին
գիրքը և Երկրորդ գրքի մի որոշ մասը հա-
մարում է մեծ մասամբ, եթէ ոչ ամբողջա-
պէս, ժողովրդական վէպից, երգերից ու զրոյց-
ներից քաղած մի պատմութիւն: Մարարափ
գիրքը՝ մի կեղծիք, և Մարարա՝ Խորենացու
հնարածը: Իսկ Պ. Գ. Խալատեան 1896 թուին
հրատարակած իւր աշխատասիրութեան մէջ²
գալիս է այն եզրակացութեան, թէ Խորենա-
ցու «վէպ» կոչուած աղբիւրները շինծու (ֆիկ-
տիւ) են, և թէ «վէպ» անուան տակ «ժաժ-
կուած են մի ամբողջ շարք զանազան, թարգ-
մանական և ինքնագիր, գրաւոր յիշատակա-
րաններ», որոնք և Խորենացու խիական
բայց «թաքցրած աղբիւրներն»³ են, և թէ
Խորենացու շատ անգամ յիշած «Հայոց վե-
պ» «ստորարար գրքերի ծագում ունի և
մեծ մասամբ Աստուածաշնչի մոտիւների շատ
ու քիչ ծարպիկ փոխադրումն» (вкусная
переработка) է, որ հենց իրեն պատմադրի
գրչին է պատկանում⁴:

1. Էմին, Վէպ հնոյն Հայաստանի, Մոսկուա, 1850:
2. Խալատեան, Վէպի և Վէպի երկարաւիտիւններ հա-
յոց լեզուի, գրականութեան և պատմութեան մասին»,
Մոսկուա 1898:

Էմին, Մոսկուա Խորենացին և հայոց հին վէպեր,
բարգմ. Գ. Խ. Թիմոխ, 1886, սուս. բնագիր 1881
թ. հրատ.

2. Գ. Халатьянъ, Армянскій Эпосъ въ Ис-
торіи Арменіи Моисея Хоренскаго. Москва. 1896.

3. Եմին, հր. 340.

4. Եմին, հր. 342:

Ճշմարիտ է, պ. Սալաթեանը եզրափակում է իւր կարծիքը՝ բայց նշանակութիւն չունի այդ քանի որ նա իւր հետազոտութեան մէջ, վերլուծելով վէպ համարում կտորները, համարում է թէ Սորենացին զրգերից առնելով՝ յերիւրած ու կեղծած է ամենը:

Ո՛րն է այս երկու կարծիքներից ընդունելին՝ կարծիքների որոնք իրարու հակադիր են:

Այսպիսի դրութեան ժամանակ աւելորդ չէ խնդիրը նորից ուսումնասիրել: Արդարեւ, պ. Մառն իւր լուրջ ու մտացի քննադատութեան մէջ՝ պ. Սալաթեանի գրուածքի շատ ու շատ թոյլ կողմերի վրայ մտանացոյց է եղել՝ բայց ցու է, որ այդ քննադատութեան մէջ հեղինակը «վէպն» ամբողջապէս չէ վերցրած և ոչ պ. Սալաթեանի և Նմինի կարծիքների ամբողջութիւնը:

Պ. Սալաթեանի հիմունքները շատ թոյլ ու խախտու են և յաճախ վէպի հետ կապ չունեցող: Բայց և այնպէս նա այդպիսի նախադիրներով շատ հեշտութեամբ եզրակացութիւններ է առնում: Թէպէտ անվերջ կրկնած «հասանական է» «գուցէ» «կարելի է կարծել» «ինձ թւում է» և նման դարձուածներով՝ նորա աշխատութիւնը սակայն, կարող է վերջը ոչ-մասնագէտի և ոչ—քննադատական աչքով կարգացողի համար ընդունելի լինել: Հոգեբանական այն պարզ օրէնքով՝ որ թոյլը թոյլի հետ միանալով իրար զօրացնում են և վերջը զօրեղ տալուութիւն թողնում: Սակայն առաջին հայեացքից հենց նորա եզրակացութեան չափազանցութիւնը, ուստի և սխալ լինելը, թւում է ընթերցողին: Ո՛հչպէս, մի պատմադիր, որ զիտէ, ժողովրդական բանահիւստութիւնը որոշ չափով գնահատել պատմութեան համար, որի ժամանակ նայն իսկ պ. Սալաթեանի կարծիքով «հայոց մէջ» ինչպէս միշտ ժողովրդական երգեր կային և այդ անկասկած է, մի պատմադիր, որի համար պ. Սալաթեանի կարծիքով անգամ «մինչև թագաւորի» է ըն-

դունել (допустить), որ նա... իւր ժամանակի երգերից վերցրել է այս ու այն բառերն ու վիպական արտայայտութիւնները: ¹—Ի՛նչպէս, մեր այդ պատմադիրը, որ այնքան ու այնքան անգամ յիշում է ժողովրդական երգերն ու առասպելները, այնքան ու այնքան անգամ էլ կեղծում է, ոչ մի անգամ չէ՞ օգտուում ժողովրդական երգերից, ստու՞մ է գրելով: «Ձայս երգելով ոմանց բամբուսներ, լուաք իսկ ականջօք մերովք» մինչև իսկ ընդհակառակն շինծու երգեր և առասպելներ է յօրինում իրենից, այն էլ միշտ մի բառ այս զրբից, մի բառ այն զրբից առնելով, նախադասութեան մի կտորն երրորդ զրբից, իսկ միւսը չորրորդից:—Առաջին հայեացքից հենց այս կարծիքն անընդունելի է թւում. որովհետեւ ընթերցողին իրեն հարց է տալի, թէ այդ պատմադիրն էլ ինչու պիտի ստէր և չեղած երգեր ու առասպելներ յերիւրէր, քանի որ կարող էր եղած ժողովրդական առասպելներից օգտուել: Դուցէ առարկեն, թէ ծանօթ չլինելու պատճառով չէ օգտուած ժողովրդական երգերից ու առասպելներից: Բայց մի՞թէ հաւատալի է, որ այն հայ պատմադիրը, որ զիտէ իրեն այնքան ատելի պարսից «փծուն» և «անձոռնի» առասպելները, չիմանար իւր հայրենի առասպելները, կամ գոնէ բնաւ հարց ու փորձ չանէր՝ իւր հայոց պատմութեան մէջ ժողովրդական առասպելների այս կամ այն կտորից օգտուելու համար:—Անշուշտ, Սորենացու յիշած պարսից առասպելներն էլ շինծու կը համարուէին, եթէ ուրիշ աղբիւրէ յայտնի չլինէին:

Միւս կողմից Նմինն ևս չափազանցութեան մէջ է ընկնում, ուրանալով զրաւոր աղբիւրը և «վէպից» քաղած համարելով ամբողջ կտորներ, որոնց համար Սորենացին պարզապէս ասում է թէ գրաւոր աղբիւրներից է առնում: Սոյն սխալին ենթարկում է և պր. Փետտերի գրելով. Սորենացու «գործոյն ամբողջ առաջին և երկրորդ գիրքը գրեթէ միայն այս [պատմական] երգերէն շինուած են ²»:

¹ Халат. Арм. Эносъ. № 114.

¹ Византийский Временникъ, Томъ V. вып. 1 и 2. Санктъ-Петербургъ. 1898, № 227 հտւ.:

² Փետրեր, Հայկական աշխատասիրութիւնք. քաղմանց 2. 3. Տաշիսէ. Վիեննա. 1895, № 121.

Երբ խօսք է լինում Մ. Խորենացու Հայոց պատմութեան մէջ եղած հայոց «վէպի» մասին՝ պէտք է չմոռանալ առանձնապէս որոշելու՝ թէ արդեօք Խորենացին յայտնում է՝ որ վէպից կամ զրոյցներից է քաղում թէ չէ։ Այս մասին շատ թեթեւ են անցնում ոչ միայն Էմինը, այլ և պ. Խալաթեանը՝ առաջինը վէպ համարելով իսկ երկրորդը յայտնելով թէ Խորենացին վէպի տեղ է ուզում ծախել շատ բան՝ մինչդեռ Խորենացին պարզապէս յայտնում է թէ զրաւ որ աղբիւրից է առած։

Այդ զրաւ որ աղբիւրը կարող է, արդարեւ, որեւէ ժողովրդական առասպելի վրայ հիմնուած լինել, բայց կարող է և ամբողջապէս գիտնականների սարքած յերիւրում (կոմբինացիա) լինել։ Եւ եթէ Էմինի թոյլ կողմն է, որ նա Խորենացու մէջ եղած այսպիսի հատուածները վիպական է համարում, առանց նեղութիւն կրելու համոզելի ապացոյցներ բերելու — միւս կողմից էլ, եթէ մէկն այդպիսի հատուածների «վիպականութեան» գէմ է գրում, նա իսկապէս Խորենացու մէջ եղած «վէպի» գէմ չէ գրում, այլ ուրիշների ենթադրած մի երեւեցական վէպի գէմ, որի հերքումը և շատ դժուար չէ։ Եւ պ. Խալաթեանի աշխատութեան զլսատի արժէքը, ինչ որ «հայոց վէպին» է վերաբերում, հենց այս կարծեցեալ վէպի հերքման մէջ է։

Ա.

ԱՌԱՍՊԵՆ.

Վէպ — Զրոյց — Վիպատմութիւն — Առասպելներ — Երգեր — Երգի վիպատմացի.

Ի՞նչ ընդհանուր անունով պէտք է կոչել հայ ժողովրդական բանահիւստութեան արդիւնքները, որոնցից օգտուած է Խորենացին։ — Անշուշտ, այն ընդհանուր անունով, որով և Խորենացին է կոչում։ Սակայն Խորենացունը թողած, կամ, ինչպէս Էմին և պ. Խալաթեան, նորաստեղծ անունով են կոչում «հայոց հին վէպերը» «հայոց վէպը», կամ, ինչպէս հ. Զարբանյան և պր. Փետտեր, «երգ, բան ընդհանրացնելով» «Դողթան երգեր» և «Հին հայոց աղբիւրների երգերը»։

Վէպ բառը որ մեր արդի լեզուի մէջ

էպոսի իմաստ է ստացել, Խորենացու մէջ բնաւ նոյն իմաստը չունի, ինչ որ վերագրում են անոր Էմին¹ և պ. Խալաթեան² առանց որեւէ հիմունքի, լսի խօսքով, յեղաշրջելով բառի հին իմաստը, որ շատ ճիշտ որոշած է «Հայկական լեզուի նոր բառգրքի» մէջ։ Վէպ է «հին զրոյցք՝ իրական կամ ստացող. պատմութիւն՝ արձակ կամ քերթողական բուրբանիւ կամ զրոյց, բայց ոչ երբեք միայն «պատմութիւն քերթողական կամ պատմական քանաստեղծութիւն. բառ յեանոց՝ դիւցազնական քանաստեղծութիւն... չափաւորական և ոչ արձակ»³ ինչպէս ուզում է հաւատացնել Էմինը շփոթելով, վէպ և երգ վիպատմաց։

Խորենացին իսկապէս քանի անգամ որ վէպ բառը գործածած է, զրաւ որ պատմական յիշատակարանների համար է գործածած։ Ա. բ. տաւում է թէ յոյները հոգ են տարել «գամենայն ազգաց զմասական և զվէպսի յոյն լեզու փոխարկել»։ Թէ այստեղ «վէպ» նշանակում է «պատմութիւն», պարզ է. քանի որ Խորենացին այդ զլխի մէջ, յայտնելով յոյների թարգմանած լինելն ուրիշ ազգերի պատմութիւնները, արդարացնել է ուզում թէ ինչո՞ւ ինքը իբրեւ աղբիւր հայոց պատմութեան յիշում է «Գեունացն միայն... զպատմազիրս» և խոստանում է պատմել հայ նահապետների «ազգարանութիւնը» և «զհայաստանեաց նախարարութիւնս, զամենեցուն զուսան և զգիրզն... որպէս հաւաստի ի յունականոս ոմանս կայ պատմութիւնս» (Ա. ա.)։ Նոյն բանին զառնում է նա և Ա. ե. զլխի վերջերում։

«Վէպ» բառն երկրորդ անգամ գործ է ածած Ա. զրբի, բ. զլխի մէջ, ուր կշտամբում է «զանխմաստակեր բարս մերոց նախնեաց», որանք հոգ չեն տարել հայոց աշխարհում «զործեալ, արժանի գրոց յիշատակի, արութեան գործերը» «մատենագրելու» և զովում է այն օտար թագաւորներին, որք զրով և պատմութեամբ զիրեանցն հաւ-

1. Վեպ մնոյն Հայաստ. եր. 92:

2. Арм. Эпосы, 42, 194:

3. Էմին, Վեպ. մնոյն Հայաստ. եր. 92:

տատեալ կարգեցին զժամանակս և զգործս իմաստութեան և զքաջութիւն իւրաքանչիւր արձանացուցին ի վէպս եւ ի պատմութիւնս: Թէ այստեղ ևս վէպ *épopee* չէ նշանակում, այդ պարզ է. քանի որ խնդիրը կատարուած գործերն արձանագրելու մասին է. այլ և «վէպս և պատմութիւնս» գրողներին կոչում է «դիւանագիրք մատենից», որոնք բանաստեղծ չեն հարկաւ. իսկ Ա. գրքի իս. զլիւի մէջ նոյն խնդրին դառնալով նոյն «գիւանագիրք մատենից» կոչում է «յիշողութեանցն վերականգնութեամբ» (Ռուկէս վերագոյն ուրեմն յառաջին ծառն ամրաստանեցաք զառաջին նախնեացն մերոց անխմաստաւոր բարուց ակորժակս այս հանդիպի և աստանոր: Բանդի և որք ի հօրէն նաբուգոդոնոսորայ գործք զընցան յիւրեանցն յիշողութեանցն վերականգնուաց):

Երկու համանիշ բառերի «ի վէպս և ի պատմութիւնս» կողքէ կողք դրուելը կարծել պիտի չապշ թէ «վէպ» չէ նշանակում պատմութիւն: Խորենացու մէջ համանիշ բառերի այսպիսի կրկնութիւնները այնքան սովորական են, որ օրինակներ բերելն աւելորդ ենք համարում: Յիշե՛ք միայն Ա. բ. «զմատեանս և զվէպս»: անոր համար միայն որ այստեղ «մատեան» և «վէպ» (պատմութիւն) համանիշ են գործածուած, քանի որ մի փոքր առաջ «մատենագիրք» և «պատմագիրք» բառերն իրրեւ համանիշ են ընդունուած. «Եւ ընդ այս մի՞ որ զարմացի» եթէ, բազում ազգաց լեալ մատենագիրք: ... մանաւանդ պարսից և քաղզկացւոց, յորս առաւել ազգիս մերոյ դտանին բազում ինչ իրաց յիշատակք մեք շուշնացն միայն յիշեցաք զպատմագիրս և անտուստ յայտարարութիւն մերոյ ազգարանութեանս (հայոց պատմութեան) խոստացաք յանդիման կացուցանել: Վերնագրի մէջ «մատենագիրք» բառի տեղ «քաղզկացւոց և ասորեստանեաց մատեանք» է դրած. իսկ հայոց պատմութիւնը պարսից և քաղզկացւոց ոչ թէ *épopee* ների մատեաններէ մէջ պէտք է լինէին, այլ պատմագրութեանց մէջ: Այդ երևում է և յիշած Ա. իս. զլիւից, ուր դառնում է նոյն խնդրին. «Ապա եթէ ասիցեն, ուստի՞ մեզ և զնախնեացն մերոց բազ-

մոց այսպէս դտանել զանուանս և զգործս, ասեմ: ի Տնոցն դիւանաց ասորեստանեաց և պարսից, վասն մտերոց անուանց և գործոց նոցա ի քարտէս արքունի: իրր գործակալաց և վերակացուաց աշխարհիս: ... Հմմտ. վերելում յիշած դիւանագիրք մատենից, իրրե վէպ, պատմութիւն գրող: Հմմտ. և Ա. ժգ. «զրազում մատեանս և զգրոյցս»: համանիշ «զմատեանս և զվէպս» ձեւին, քանի որ, ինչպէս յետոյ կը տեսնենք, զրոյց նոյնպէս պատմութիւն է նշանակում:

Այսպէս տեսնում ենք, Խորենացին երկու անգամ միայն «վէպ» բառը գործածած է և այն «պատմութեան» իմաստով:

Այնուհետեւ Խորենացին գործ է ածում երեք բարդուած բառ, որոնց մէջ «վէպ» դարձեալ «պատմութեան» իմաստ ունի. Բազմավէպ (Polyhistor) (Ա. դ.), որ և «պատմագիր» է կոչում: Այս (Ա. դ.) զլիւի մէջ դադարեցնում է որոշ «պատմագիրներէից», ինչպէս և Բազմավէպից, քաղած պատմութիւնը, բայց Ա. դ. զլիւի մէջ նոյն դադարեցրած պատմութեանը դառնալով, նոյն պատմագիրները այստեղ «Վիպագիր» է կոչում. իսկ վերնագրի մէջ «հնախօս», որով և վէպ դարձեալ նոյնանում է «պատմութեան» հետ: «Վիպագիր» բառը «պատմագրի» իմաստով գործածուած կայ և ուրիշ հեղինակների մէջ, օրինակ Եւսեբիոսի Բրոնիկոնի, Ա. «զրանաստեղծս, զվիպագիրս զփիլիսոփայս»: որտեղ վիպագիր հաստատեալ իբրեւ պատմագիր է դրուած բանաստեղծների և փիլիսոփաների հետ: Նոյն ձեով՝ Ոսկերերանի մէջ, «վիպագիրք և փիլիսոփայք և որ զառասպելսն գրեցին» (այսինքն բանաստեղծներ): Դարձեալ Եւսեբիոսի Բր. մէջ «Վեփաղիտնի վիպագրի» վասն ասորեստանեաց թագաւորութեան: Նոյն տեղում. «Առ որով զլինել մեծ ջրհեղեղին վիպագրեն», այսինքն պատմեն. (Տե՛ս նաեւ ուրիշները. Ն. Բառգ. Հայկ. լեզ.):

Վէպ բառի իսկական իմաստը Խորենացու մէջ իրրեւ պատմութիւն պարզուած համարելով, թողնում ենք «վիպասանք» բառի մասին իւր տեղում խօսել: Անցնենք զրոյց բառին, որ էմին մեկնում է և պ. Խալաթեան¹

¹ Արմ. Զոսէ, եր. 42.

ընդունում է իբրև die Sage, сказание, «հա-
կառանք վեպի» (որ չափաբերական է), «պատմ-
մունքին արձակ և ոչ չափաբերական» հին
առանգութիւնք բերանացի գրուցեալք»¹։

Եթէ լաւ ուշադրութիւն դարձնենք, կը
տեսնենք, որ զրոյց բառը խորհնացու մէջ
համանիշ է վէպ բառին, և նշանակում է թէ
բերանացի և թէ գրաւոր որեւէ պատմութեամբ,
պատմութիւն։

III. Գրաւոր պատմութիւն։ Այս իմաստով
յաճախ գործածուած ենք գտնում զրոյց
բառը. «Գիւղից և դաւառաց ևս և իւ-
րաքանչիւր տանց, և հանուրց հակառա-
կութեանց և դաշանց առ մեզ գտանին
անրաւ գրուցաց մատեանք» (Ա. գ.) «Ըստ ա-
խորժելոյ որպէս կամեցան իւրաքանչիւրքն (վի-
պագիրք) փոփոխել զանուանս և զգրոյցս և
զժամանակս» (Ա. գ.)։ Խնդիրն այն մասին է,
թէ արտաքին պատմագիրներին մէջ եղած պատ-
մութիւնները ամբողջութեամբ են Ս. Գրքի պատ-
մութիւնից՝ անուանելով պատմութեամբով և
ժամանակներով։ Հրամայէ (Նինոս) զրազում
մատեանս և զգրոյցս առաջնոցն... այրել։
Ուրեմն զրոյցը նոյնանիշ պատմութեան գրե-
րի։ «Նինոս... ի գրուցաց ուսեալ» (Ա. ժգ.)։
Հաւանորէն գրաւոր և ոչ անգիր զրոյցներ,
քանի որ նոյն Նինոսը գրաւոր «զրոյցքն» այ-
րել է ուրիշների քաջութեան յիշատակը ոչնչ-
ացնելու համար։ «Երամարեալ կարգեցից...
և որ ինչ վասն սոցա զրոյցք... ոչինչ կամա-
մտածական... այլ որ ինչ ի գրոց» (Ա.
ժթ.)։ «Զրոյցս մատենից տային» (Ա. գ.)։ այ-
սինքն գրութեամբ պատմութիւններ էին անում
«Մար Արաս կաթինայ զմերոյ ազգիս միայն
հանեալ զպատմութիւն հաւաստի... յորմէ
մեր հաւաստի ի վերայ հասեալ կարգի գրու-
ցացս երկրորդեմք»... (Ա. թ.)։ «Երբ ապա
յըղձային քո հասանիցեմք գրուցաց պատ-
մութիւնն» (Ա. է.)։ այսինքն, երբ պէտք է
հայոց պատմութիւնը պատմենք։ Այսպէս և
Բ. լր. խորովի Անտիի, Լուսաւորչի ծննդե-
ական պատմութիւնն անելուց յետոյ, «Իսկ
զմեցեալս ի գրուցացս ուսուցանէ քեզ Ազա-
թանգեղոս»։ Թէ այս բոլոր դէպքերում «զրոյց»

գրաւոր պատմութիւն է նշանակում պարզ է։
Նոյն իմաստը պահում է զրոյց բառն և բար-
դութիւնների մէջ։ «Թէ ո՞վ կամ ուստի՞ զայս-
պիսի եզրիս գրուցաբանութիւնս» (Ա. բ.) խոս-
քը Մարաբասի պատմութեան մասին է։ Նոյն
իմաստով. «Այս կարգ գրուցաբանութեան դա-
դարումն առցէ» (Ա. թ.)։ «Վասն Յունացն
գրուցաբանս զակնարկութիւն մերոց պիտոյից
առնելոյ՝ բաւական է այսչափ» (Ա. բ.)։
«Երթեալ հասանիցեմք ի հեթանոսական զը-
րուցակարգութիւնս» (Ա. գ.)։ գրաւոր պատ-
մութիւնները։ Նոյնպէս պատմութեան իմաս-
տով, ինչպէս վերևում յիշած ենք, և Ա. գ.
«Այսպիսիս ընթերցասիրիցիմք իմաստութեան
ճառս և զըրուցապատմութիւնս» (համա. «զրոյցս մա-
տենից տային»)։ այսինքն, «չարածս բանից»։
զոր դիւանագիրք արձանացուցանեն ի վէպս
և ի պատմութիւնս։ —

Այսպէս «զրոյց» բառը մենակ առած,
նշանակում է ընդհանրապէս պատմութեամբ,
պատմութիւն, իսկ խորհնացու մէջ յատկա-
պէս գրութեամբ պատմութիւն¹։

IV. Բերանացի զրոյցներ։ — Այս իմաստով
իբրև die Sage, գործածելիս խորհնացին միշտ
անգիր։ Հին վաղնջուց, նախնական բառե-
րով, կամ «յաւանդութենէ հասեալ» որով
ի հօրէ առնելով յիշատակ... զըրուցին պա-
ռաւունք» շրջաբանութիւններով որոշում է
ժողովրդական զրոյցը գրաւոր զրոյցից։ «Զհամ-
բաւս հինս և զգրոյցս նախնականս յիւրեանց
թագաւորաց կամ մեհենից մատեանս գրել»
(Ա. ժգ.)։ Այնուհետեւ նոյն իմաստով հին
անգիր։ յաւանդութենէ հասեալ զրոյցներ են
Ուրմարիոգորոսի պատմածները (Ա. գ.)։ որոնց
մասին յետոյ խօսք կը լինի։ «Ասեմ զրոյց
զքանչելի ծերոյն... որդի ի հօրէ ամենելով զյի-
շատակ զըրուցացս» (Բ. հե.)։ «Ընդէր պատրիմք
զըրուցով վաղնջուց և պառաւեալ առաւելելիք,
պաղեստինացիս զմեզ վարկանելով» (Բ. իգ.)։
Արտաւազդի շղթայուած լինելու մասին «զըրու-
ցնս պատմութեամբ» (Բ. կա.)։ Տօրքի մասին ա-
ռաւելին ևս որ միանգամայն երգ է, երկու ան-
գամ կոչուած է զրոյցը, ոակայն այստեղ «զրոյցք»

¹ Լեւին, վեպի հե. Հայաստ. եր. 93։

¹ Հմմտ. Визант. Временникъ. III, V, 1898 եր. 261.

բառն անգիր գրոյցների իմաստ չունի՝ այլ ընդհանրապէս՝ պատմութեան պատմութեան անորոշ առումով։ «Ոչ Սամսոնի և ոչ Երակիւայ և ոչ Սաղծկին յարմարեն այս գրոյցք» (Բ. Ը.) որ է՝ Տորքի մասին այս պատմութեանը ոչ Սամսոնին և ոչ Հերակլին և ոչ Սաղծկին են յարմարում։ Դսկ երկրորդ դէպքում. «Բանդի էր արգարե սաստիկ հզօր և այսպիսեաց զրուցաց արժանի»։ «Որովհետեւ Տորքըն արգարե սաստիկ հզօր էր և այսպիսի պատմութիւնների (ընդհ. առմամբ) արժանի»։ Այսպէս հասկանալով այլևս կարիք չենք տեսնում «գրոյցք» բառին այստեղ «ժողովրդական պատմութեան» իմաստ տալու և САЗ-КП բառով թարգմանելու՝ ինչպէս անում է պ. Մառը՝¹ հիմնուելով անոր վրայ՝ որ այդ «գրոյցք»-ը առասպել են։

Երուանդի ծննդեան մասին գրում է (Բ. Լ.)։ «Եւ ունին զրոյցք յաղագս նորա այսպէս»։ Այս «գրոյցք» բառից լոկ՝ եզրակացնել կարելի չէ թէ Խորենացին «հաւատացնում է» թէ «հայ ժողովրդական գրոյցներ» կային Երուանդի ծննդեան մասին և թէ նա այդ ժողովրդական գրոյցներից և ոչ թէ մի գրաւոր աղբիւրից է քաղում այդ պատմութիւնը, ինչպէս յայտնում է պ. Մալաթեանը²։ առանց որեւէ հիմունքի։ Այդ ձևով հասկանալը Խորենացու լեզուն ապահովապէս թիւրել կրնանակել, քանի որ «գրոյց» բառով Խորենացին ինչպէս տեսանք, մի տեղ ընդհանրապէս որ և է, միւս տեղերում յատկապէս գրաւոր պատմութիւն, պատմութեան է հասկանում, իսկ ժողովրդական գրոյցը որեւէ ածականով կամ նախադասութեամբ որոշում է միշտ։ Աւերացնենք և այն, որ նոյն դարձաւոր երկրորդ անգամ գործ է ածում Խորենացին Բ. գրքի ձա. զլխի մէջ, Մամիկոնեանների ծագման մասին գրելով, «Որ ունին զրոյց այսպիսի»։ ուր զրոյցը ժողովրդական չէ, այլ գրաւոր պատմութիւն, որ պատմապիւր ֆերմելիանոս եպիսկոպոսի «պատմութիւնից» առած պիտի լինի ինչպէս գրում է Բ. հե.

«Որ ինչ զլինի մահուանն Խորոյիւ մինչև յթագաւորութիւնն Տրդատայ ի ժամանակս անիշխանութեանն պատմէ (Փերմելիանոս)՝ ստոյգ համարելով երկրորդեմք»։

Մենք բերեցինք ինչպէս կարծում ենք, այն բոլոր կտորները, ուր Խորենացու մէջ գործածուած է «գրոյց» բառը։³ Այդ բոլոր գործածութիւնները ինչպէս ընթերցողը կրտեսնէ, չեն կարող թոյլ տալ զրոյցի մէջ արձակի հետ և խօսքի մը չափական ծնւր տեսնելու։⁴ ինչպէս գրում է լոկ խօսքով պ. Փետաեր։² Անշուշտ, երգերի մէջ ևս ինչպէս Տորքի մասին երգի մէջ, զրոյցների այսինքն պատմութիւնների են լինում, բայց այդ մեղ իրաւունք չէ կարող տալ չընդունելու, որ զրոյց բառն ևս ընդհանուր իմաստ չունենայ ինչպէս երգ, պատմութիւն, վէպ բառերը, այլ բանաստեղծութեան որեւէ տեսակ լինի։

Զրոյց բառի բոլոր գործածութիւնները մէջ բերելով տեսնում ենք որքան սակաւ բան իսկապէս ոչ ինչ, առնուած է ժողովրդական գրոյցներից Խորենացու հայոց պատմութեան մէջ։ Մէկն է՝ Բագրատունեաց պաղեստինացի լինելու մասին վաղնջուց զրոյցը, որ պատմագիրը գործ է ածում ուրիշի բերանը դրած՝ ծաղրական կերպով և «պառաւեալ առասպելիք» է առնանում։ Միւսն է Արտաւազգի շղթայուած լինելու ևն. պառաւանջ զրոյցը, որը նոյնպէս քիչներքեւում դարձեալ առասպել է կոչուում։

Ղիպասանը, երգը վիպասանաց կոչում է Արտաշէսի Սաթենիկի Արգաւանի և Արտաւազգի մասին երգիչները կամ երգերն ու պատմութեանը, սակայն ագոնջ համար նոյնպէս աւելի յաճախ «առասպել» առասպելաբանելով երգել, առասպելալ երգել, երգել յառասպելին, երգիչքն առասպելաբանն, երգիչք յառասպելին տան» բառերն ու դարձուածներն է գործածում։ Դսկ ժողովրդական բանահիւսութեան մնացած գրեթէ բոլոր նիւ

1. Виз. Врем. V. Կր. 261.

2. Халат. Арм. Эпосъ, Կր. 213.

3. Հմմտ. Մառ, Виз. Врем. V. Կր. 261.

4. Կոչումներն անբողջացնելու համար անխցնեմք, որ Բ. կգ. «պատմագրոյ» Բարդսանի պատմելու (գրաւոր) համար գործ է ածում «գրուցե» յայտ. հենց իրեն նորեկացու պատմագրելու համար «գրուցեցաք» (Բ. Կե.) իս Բ. ձգ. քերականի պատմելու համար «գրուցեաց»։

2. Ֆերքեր, Հայկ. աշխատ. Կր. 127 ծան. 2.

Թերը որոնցից օգտուած է Սորենացին մի-
միայն առաջադրել անունն են կրում: Առա-
պել են՝ Շամիրամի մահադնի Տարբի Ար-
ծրունեաց ծագման Սանատրուկի Նրուան-
դի հայեացքի Սմրատի Արատազդի մարդ-
դէսի մասին յիշածները: Առաջադրել է նոյն
խոյն Շարայի մասին ասած առաջադր խօսքը:

Հայոց պատմութեան համար եղած հայ
ժողովրդական բանահիւսութիւնից առաջադրել
կոչումը չունի մի միայն Տիրքանի մասին յի-
շածը որ միայն երգ է կոչում. «Զորմէ ա-
սէին ի հինան մեր որք բամբուսն երգէին»:
Առաջադրելից իրեւ երգ յիշում են՝ Երգք
վիպասանաց (նոյն Թուրքացի երգք), մա-
հադնի Տարբի և Արատազդի մասին: Դսկ
մնացած առաջադրելի մասին տեղեկութիւն
չէ տրուած, թէ արդեօք երգուել են թէ չէ,
և հարկ չկայ որ անպատճառ երգուած
լինին. քանի որ կարող են և պատմուած լի-
նել ինչպէս և հինց վիպասանքը պատմուած
են (Բ. խ/Թ.):

Մեր քննութիւնից երևում է, որ հի-
մունք չկայ մի ընդհանուր վերնադրի տակ
«հայոց հին վէպերի» կամ «վէպի» և կամ «հին
հայոց ազգային երգերի»: Դրոյթման երգերի և ոչ
ժողովրդական զրոյցների մասին խօսելու այլ
միայն առաջադրելի մասին որոնց մէջ
բոլոր Սորենացու, որոշ առաջադրելի կոչում
են վիպասանք կամ երգք վիպասանաց:

Պ. Սարգսեանը ցանկանում է, որ Սո-
րենացին «երգք վիպասանաց» խօսքն առած
լինի Եփրեմ Սուրբին Ասորու Զորք. թագ-
մեկնութեան մի կտրից, որի մէջ յիշում են
«երգք վիպասանաց» և «վիպասան երգք»: Եւ
ոչ միայն այդքան, այլ Սորենացու «ազրիւրի»
այդ տեղը ցոյց տալուց յետոյ, աւելացնում
է թէ այդ բառերն «ինձ համար դոնէ պարզ
է, որ ընդհանրապէս որ և է բանաստեղծա-
կան երգի (?) նշանակութիւն ունին մինչդեռ
Մովսէսը մասնաւորում է (специализирует)
վերջին ասացումը [երգք վիպասանաց],
տալով անոր հայ ապագաների պատրաստի
քերթուածների (ноша), հայկի Տիրքանի,
Արատազի և ուրիշների քաջագործութիւն-

ները երգող՝ հայոց նուագաւոր վէպի (компо-
нированного армянского эпоса) իմաստ: 1

Թէ այդ լուի ենթադրութիւնը սխալ է
և Սորենացին իրենից չէ հայ ժողովրդական
երգերին ու զրոյցներին «երգք վիպասանաց»
ինչպէս և «առաջադր» անունը տալիս, այլ հինց
այդպէս էլ կոչուել են, այդ երևում է Փառասոս
Բիւղանդի պատմութիւնից, որի մէջ Երրորդ
Դար. զ. ժ. յիշում է. «Դեղերեալ մա-
շէին [խառնածաղանձ բազմութիւն մարդկան
ժողովոց նախաբարաց կամ շինականու-
թեանց] յանուղղայ կրթութիւն ընդ չքնասի
մասցն ի հնութիւն հեթանոսութեանց սո-
վորութեանց, բարբարոս խառնազուծ միա-
սունելով Եւ զիւրեանց (=զհայոց) երգս ա-
ռաջադրաց զվիպասանութեանն սիրեցեալք
ի փոյթ կրթութեանցն և նմին հաւատա-
ցեալք և ի նոյն հանապազօրեալք: Փառս-
ասոսի այս կտրից իմացում է, որ հայոց
հին հեթանոսական երգերը կոչում էին
«երգք առաջադրաց», «երգք վիպասանութեան»:
«վիպասանութիւն և վիպասանք» բառերի
համանիշ լինելը յետոյ կը տեսնենք: Այստեղ
նկատենք, որ Բիւղանդի այս հատուածը միւս
կողմից ճշտում է և այն, որ Սորենացին ի-
րենից չէ վիպասանաց երգերին նաեւ «առա-
պել», «երգքն յառաջադրան» և ինչ կոչումը տա-
լիս, այլ որ հինց ժողովրդի մէջ «վիպասանք»
կոչուել են և «առաջադր»:

Դալով պ. Սարգսեանի միւս ասածներին,
պէտք է նկատել, որ նա ուղղակի յեղաթիւ-
րում է Սորենացու պատմութիւնը: Սորե-
նացին հայկի մասին, օրինակ, ոչ երգ, և ոչ
առաջադր, և ոչ ժողովրդական զրոյց է
յիշում, ուր մնաց թէ նորա քաջագոր-
ծութիւնները երգուելին «հայոց նուագա-
ւոր վէպի» մէջ: Բայց մի թէ այսպիսի նուա-
գաւոր վէպ յիշում է ուր և է Սորենա-
ցին: Թէ հայոց մէջ երգերը որ և է զործիքի
նուագիչութեամբ կարող էին երգուել, ինչ
տարօրինակ բան կայ այդտեղ, քանի որ ա-
մեն նախնական ազգերի մէջ իսկ երգում և
միանգամայն նուագում է: Ընդհանուր ա-
ռուցները, մեր ժողովրդական երգիչները սա-

1. Տես նաեւ Բաց չալի լեզուի:

1. Халат. Арм. Эпосъ, стр. 195.

զիւ թափ կամ այլ գործիքի նուազակցութեամբ պիտի երգեն այժմ իսկ հին ժամանակ այդ պիտի չլինէր: «Բամբիւն» բառը որի վարիաններն են «փանդիւն» «բանդիւն» թորենացաւ մէջ սակայն ոչ թէ «վէպի» հետ է գրած այլ մի տեղ «ցցոց և պարուց» երգերի հետ (Ա. զ.): որ հայոց վիպասանքի հետ կապ չունին. երկրորդ անգամ յիշում է թէ Տիգրանի մասին «բամբուամբ» երգում էին (Ա. իզ.): իսկ երրորդ անգամ յիշում է թէ Վահագնի մասին առասպելը բամբուամբ երգում էին (Ա. լա.): իսկ միւս առասպելների բամբուամբ երգուելու մասին և ոչ մի խօսք: Այստեղից եզրափայցնել թէ թորենացին ասում է թէ հայոց «նուազաւոր վէպ» է եղել Հոյկի Տիգրանի Արաշէօի և ուրիշների մասին: Իմա հայոց բոլոր առասպելները միասին առած (!): Բայց նախ քան այդ պէտք էր ցոյց տալ թէ հայոց բոլոր առասպելները երգուել են այն էլ բամբուան նուազակցութեամբ և ոչ թէ պատմուել թէ անոնք մի կապակցեալ ամբողջութիւն են կազմել, — այն որ թորենացին ոչ մի տեղ չէ ասած:

Արժէք չունի և պ. թալաթեանի ասածը, թէ թորենացին մասնաւորում է «երգք վիպասանաց» և իբրեւ «տեքնիկական տերմին» է գործածում, քանի որ այդ մասին ևս ոչ մի հիմունք չէ բերուած:

Սակայն եթէ այդ բառը հայոց մէջ նոյն իսկ իբրեւ տեքնիկական տերմին լինէր, այդ դեռ ևս արգելք չէր կարող լինել որ հայ թարգմանիչներն օտար ազգերի նման երգերը հայոց երգերին յատուկ անուններով կոչէին: Բաւական է միայն ուշադրութիւն դարձնենք, թէ ինչպէս հայ թարգմանիչները օտար աստուածութիւններն ու հսկաներն Աստուածաշնչի մէջ Հայկի Վահագն: Անգեղ Էւր հայ աստուածների կամ հսկաների համարատաւան են դնում: Այդպէս կարող էր և Եփրեմ խորին Ասորեոյ դրօշակը մի թարգմանիչ հայոց «վիպասան» բառով կոչել ուրիշ ազգերի երգերը:

(Եւ. Կ. Կ. Կ. Կ.)

Մ. Արեղեան



ՀԱՅԵՐԸ

ՄԱՐԴԱՐԱՆԵԿԱՆ և ԱՇԽԱՐՀԱԳՐԱՆԵՆ

ՏԵՍԱԿԷՏԻՑ.

Երկայ 1898 թ. աշնանը Դր. Զանշեանցը այս ընծայեց երկրորդ հրատարակութեամբ *Братская Помощь* (Եղբայրական Օգնութիւն) ասուար գիրքը՝ քարեփոխուած եւ միջացրած ակամաւոր ոռու ուսումնականների պէսպէս նմոյացի, նոր յօդուածներով: Մի կողմ թողնելով յարգելի հրատարակչի մարդասիրական սուրբ նպատակը, այսինքն է՝ զրբի վաճառումից զոյացած արդիւնքը գործ դնել յօդուած ծածկաւ — Հայոց որբերի, * պ. Զանշեանցի գիրքը մի ուրիշ լաւ կողմ եւս ունի. այդ ոչ թէ à tout prix նպատաստը կարծիք տարածելն է Հայերի մասին ոռո հատարակութեան մէջ, այլ անաշատ եւ մըշմարտ տեղեկութիւններով, փոքր ի շատեւ, ուղղել սխալը, հերքել անօգնական Հայերի վրայ քարոզած շինծու առասպելները, որոնք զարմանալի յամառութեամբ տարածուելով նաեւ ոռո հատարակութեան լաւագոյն խաւերի մէջ, յարատեւում են մինչեւ մեր օրերը: Մենք տրամադիր ենք կարծելու, թէ հրատարակչը այս կողմիցն էլ մասամբ հասնելու է նպատակին: Բայց չափաւ է մարգարէանալ. ժամանակն ինքը ցոյց կը տայ: Դառնանք զրբին, որի հրատարակութիւնն ըստ արժանւոյն գնահատուեցաւ թէ ոռո եւ թէ Հայոց մամուլի կողմից: Ինչպէս ընթերցողը կարող է տեսնել երկրորդ հրատարակութեան յառաջարանից: Մենք այսչափ միայն կարող ենք ասել, որ յիշեալ պատկանելի ժողովածուի մէջ, ի թիւս զանազան զանձների, կան նաեւ այնպիսի ընտիր եւ զուտ ուսումնական հետազօտութիւններ, որոնց հայերէն թարգմանութիւնը ոչ միայն ընթերցող հատարակութեան համար առատ նիւթ կը մատակարարէր, այլ եւ զուցէ ուսումնասիրութեան առարկայ դառնար, մաս-

* Տիգրանակերտի վիլայէթի Բալու քաղաքում արդէն հաստատուած է մի որբանոց 25 մանուկների համար յանուն Եղբայրական Օգնութեան (անս. Русскія Вѣдомости № 242. 1898 թ.).